

Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց Հայաստանում ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Սվիտալսկուն

Հոկտեմբերի 30-ին մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց Հայաստանում ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Սվիտալսկուն: Դեսպանի հետ ժամանել էին ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության գործերի հանձնակատար Նադյա Լիխտենբերգերը, Շվեդիայի Թագավորության գործերի հավատարմատար Մորթեն Էնբերգը և ԵՄ պատվիրակության մամուլի և տեղեկատվության հարցերի պատասխանատու Անահիտ Ազատյանը:

Կողմերը քննարկեցին ԵՄ-Հայաստան համագործակցության և ԵՄ աջակցությանը վերաբերող ընդհանուր թեմաներ: Սարգիս Սահակյանը նշեց, որ մարզը Հայաստանում ԵՄ պատվիրակության հետ համագործակցության փորձ ունի, և հայտնեց իր պատրաստակամությունը առաջիկայում այն ընդլայնելու համար: Իբրև գործունեության շրջանակ, մարզպետն առանձնացրեց մարզում գիտական մի շարք կազմակերպությունների առկայությունը, որոնց հնարավորությունները կարելի է օգտագործել ոլորտի զարգացման համար:

Քննարկվեցին նաև համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության խթանման, գյուղատնտեսության, կրթության, մշակութային ոլորտներում ծրագրերի իրագործման հետ կապված խնդիրներ: Իրենց առաջարկություններն ու տեսակետներն արտահայտեցին հանդիպման բոլոր մասնակիցները: Դեսպան Պյոտր Սվիտալսկին նշեց, որ նա ունի այն դիրքորոշումը, որ գործունեության ոլորտում մեծ տեղ է հատկացվելու մարզերին, նրանց համակողմանի և արդյունավետ զարգացմանը:

Կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին առաջիկայում շարունակել հանդիպումները և գործնական ընթացք տալ քննարկված հարցերին: